«Գրականություն և բանահյուսություն. հետազոտության միջգիտակարգային մոտեցումներ և թվային տեխնոլոգիաներ» խորագրով ամառային դպրոց

Ծաղկաձորի ԵՊՀ ուսումնաարտադրական բազայում հուլիսի 27-29-ը տեղի ունեցավ «Գրականություն և բանահյուսություն. միջգիտակարգային մոտեցումներ և թվային տեխնոլոգիաներ» խորագրով ամառային դպրոցը, որը կազմակարպվել էր ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ակադ. Հր.Թամրազյանի անվ. հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի նախաձեռնությամբ՝ Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի՝ հայագետ կադրերի պատրաստման նպատակով տրամադրված դրամաշնորհի շրջանակներում: Եռօրյա ամառային դպրոցին մասնակցում էին ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողներ և դասախոսներ, երկու հրավիրյալ դասախոս ԵՊՀ այլ ֆակուլտետներից և մեկ բանախոս Գերմանիայից:

Եռօրյա ամառային դպրոցի առաջին օրվա թեման գրականության և բանահյուսության ուսումնասիրություններում միջգիտակարգային մոտեցումների կիրառությունն էր: Առաջին բանախոսությունը նվիրված էր գրականություն և փիլիսոփայություն առնչությունների բացահայտմանը: Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դոցենտ Սիլվա Պետրոսյանը հանդես եկավ **«Գրական տեքստը՝ որպես փիլիսոփայական խորհրդածությունների դաշտ (Այորեն Կիերկեգոր)»** բանախոսությամբ: Ընդհանուր տեսական

դատողություններով ի մի բերելով հայ գրականության մեջ փիլիսոփայական տեսությունների ազդեցության հարցը՝ Ս.Պետրոսյանը առավել հանգամանալից ներկայացրեց գրական տեքստի և փիլիսոփայության կապը Կիերկեգորի ստեղծագործությունների օրինակով: Պետրոսյանի վերլուծությունները բացահայտում էին այս ինքնատիպ գրող-փիլիսոփայի ստեղծագործության շերտերը՝ դրանցում ի հայտ բերելով մարդու մտածական զարգացման փուլերի մի յուրօրինակ համակարգ:

Միջգիտակարգային ուսումնասիրություններին էր նվիրված նաև առաջին օրվա երկրորդ բանախոսությունը: Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի պրոֆեսոր Ա.Ջիվանյանի «**Բանավոր մշակույթի լեզվական առանձնահատկությունները. լեզվի «բանահյուսական» գործածությունը**» բանախոսության մեջ բացահայտվում էին լեզվի և բանահյուսության ուշագրավ առնչությունները: Մասնագիտական առումով կանգնած լինելով մի քանի գիտակարգերի միջև՝ լեզվի, գրականության և բանահյուսության, նաև լինելով թարգմանիչ՝ Ա.Ջիվանյանը ուշագրավ օրինաչափություններ ներկայացրեց, որոնցով բանահյուսության լեզուն տարբերվում է գրականության լեզվից, ներկայացրեց բանահյուսական տեքստերում բառիմաստի քննության որոշ ուշագրավ օրինակներ: Առաջին օրվա երկու բանախոսությունն էլ բուռն քննարկումներով ամփոփվեցին:

Պակաս հետաքրքիր չէր ամառային դպրոցի երկրորդ օրվա թեման, որը նվիրված էր բանասիրության մեջ թվայի գործիքների կիրառությանը: Երկրորդ օրվա հիմնական բանախոսն էր հայ բանասիրության ֆակուլտետի նախկին դասախոս, այժմ Հալլե-Վիթենբերգի

Մարտին Լյութերի անվան համալսարանի Արևելագիտության ինստիտուտի «Մեսրոպ» հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող Անի Շահնազարյանը, որն իր բանախոսությունը ներկայացրեց առցանց: Բանախոսության թեման էր՝ «**Թվային հումանիտար գիտությունները ժամանակակից աշխարհում. գործիքներ, մեթոդներ, նախագծեր**»: Ա.Շահնազարյանը լսարանին ծանոթացրեց հումանիտար գիտության մեջ կիրառվող թվային գործիքների, որոնք զգալիորեն դյուրացնում են գիտնականի տեխնիկական աշխատանքը՝ տնտեսելով ժամանակ և վայրկյանների ընթացքում վերլուծելով մեծաքանակ տվյալներ: Խոսվեց թվային գործիքների կիրառման հիմնական մեթոդների մասին, ներկայացվեցին աշխարհում իրականացված որոշ խոշոր նախագծերի օրինակներ, ինչպես նաև սեփական աշխատանքների օրինակներ, որոնք կատարել էր վերջին ութ տարիների ընթացքում Ա.Շահնազարյանը: Բանախոսության ավարտին առցանց քննարկմամբ բարձրացվեցին լսարանին հուզող հարցեր, որոնք ոչ միանշանակորեն էին գնահատում թվային գործիքների բացարձակացումը, նախազգուշացնում էին նաև վտանգների մասին: Անշուշտ կարևորվեց այս նոր ոլորտի նորարարությունների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերումը և թվային գործիքների օգտագործման ունակությունը մեծածավալ նյութերի հետ տեխնիկական աշխատանքը դյուրացնելու գործում:

Վերջին քննարկման անմիջական շարունակությունն էր նաև օրվա երկրորդ կեսին տեղի ունեցած կլոր սեղան-քննարկումը՝ «**Բանասիրությունն արհեստական բանականության դարում. ԱԲ-ն գործի՞ք, կատարո՞ղ, հեղինա՞կ**» թեմայով, որը վարում էր հայ բանասիրության ֆակուլտետի դոցենտ Ա.Սեմիրջյանը: Խաղային մեթոդներով կազմակերպված այս քննարկման ընթացքում մասնակիցները, որ բաժանված էին մի քանի խմբերի, պետք է գուշակեին, թե առաջարկված գրական և քննադատական տեքստերից որոնց հեղինակներն են մարդիկ, և որոնց հեղինակն է ԱԲ-ն: Խաղի ավարտին քննարկվեցին ԱԲ կիրառման հնարավոր վտանգները, փորձ արվեց ուրվագծելու այն նուրբ սահմանը, որից այն կողմ գիտնականի գործը որոշակիորեն դյուրացնող գործիքը կարող է դառնալ վնասակար:

Ամառային դպրոցի երրորդ օրն ամփոփվեց պանելային քննարկմամբ՝ «**Հայագիտության խնդիրները և զարգացման հեռանկարները**» թեմայով, որի վարողն էր ակադ. Հր. Թամրազյանի անվ. հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի վարիչ, դոցենտ Ն. Վարդանյանը: Քննարկման մասնակիցներն էին հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, դոցենտ Ա.Գալստյանը, նույն ֆակուլտետի դոցենտներ՝ Ա.Արզումանյանը, Վ.Ավագյանը, Լ.Սեյրանյանը, Ա.Սեմիրջյանը: Քննարկումը յուրօրինակ ամփոփումն էր նախորդ երկու օրերին հնչած հարցադրումների և, միևնույն ժամանակ, բարձրացնում էր հայագիտությանը վերաբերող խնդիրներ, որոնք դուրս էին մնացել նախորդ քննարկումներից: Հնչեցին հարցեր՝ կապված հայագիտության խնդիրների, գիտակարգերի և դրանց միջև անհրաժեշտ կապի ապահովման, ավանդական և ժամանակակից մեթոդաբանության, զարգացման հեռանկարների վերաբերյալ: Հայ բանասիրության ֆակուլտետի դասախոսները համակարծիք էին, որ հայագետի առաջնային խնդիրը հայի և հայկականի ուսումնասիրությունն է և որ այդ նպատակին հասնելու համար այսօր անհրաժեշտ են միջգիտակարգային մոտեցումներ, ուր կարող են համադրվել գրականությունը, բանահյուսությունը, լեզուն, արվեստը, մշակույթը, ազգագրությունը, պատմությունը, հնագիտությունը և այլ ոլորտներ, որոնց օգնությամբ առավել համակողմանիորեն կարելի է բացահայտել ուսումնասիրվող երևույթները և որոնց միջգիտակարգային ուսումնասիրումն առավել նպատակային կարող է դառնալ այս ոլորտների մասնագետների համագործակցության ճանապարհով:

The Summer School: "Literature and Folklore: Interdisciplinary Research Approaches and Digital Technologies"

On July 27–29, the summer school titled "Literature and Folklore: Interdisciplinary Approaches and Digital Technologies" took place at the YSU Educational-Production Base in Tsaghkadzor. The event was organized on the initiative of the Chair of History of Armenian Literature and Literary Theory named after Acad. Hr. Tamrazyan at the YSU Faculty of Armenian Philology, within the framework of a grant provided by the Pan-Armenian Foundation for Financing Armenian Studies for the purpose of training Armenologist specialists. Students and lecturers from the YSU Faculty of Armenian Philology, two invited lecturers from other YSU faculties, and one speaker from Germany participated in the three-day summer school.

The topic of the three-day summer school's first day was the application of interdisciplinary approaches in literary and folklore studies. The first lecture was dedicated to revealing the connections between literature and philosophy. Associate Professor Silva Petrosyan from the Faculty of Philosophy and Psychology delivered a lecture titled "**The Literary Text as a Field of Philosophical Reflection (Søren Kierkegaard)**." Summarizing the question of the influence of philosophical theories on Armenian literature through general theoretical considerations, S. Petrosyan presented the link between literary text and philosophy in greater detail using Kierkegaard's works as an example.

Petrosyan's analysis revealed the layers of this unique writer-philosopher's work, highlighting a distinctive system of stages in human intellectual development within them.

The second lecture of the first day was also dedicated to interdisciplinary studies. In the lecture titled "**Linguistic Features of Oral Culture: The 'Folklore' Use of Language**" delivered by Prof. A. Jivanyan from the Faculty of European Languages and Communication, the remarkable connections between language and folklore were revealed. Standing at the intersection of several disciplines professionally—language, literature, and folklore—as well as being a translator, A. Jivanyan presented notable patterns that distinguish the language of folklore from that of literature, along with insightful examples analyzing word meanings within folkloric texts. Both lectures on the first day concluded with lively discussions.

The topic of the summer school's second day—dedicated to the use of digital tools in philology—was no less interesting. The main speaker for the second day was Ani Shahnazaryan, a former lecturer at the YSU Faculty of Armenian Philology and currently a researcher at the "Mesrop" Center for Armenian Studies at the Institute of Oriental Studies, Martin Luther University Halle-Wittenberg, who presented her lecture online.

ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏ
Ամառային դպրոց

ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏ

The topic of the lecture was "**Digital Humanities in the Modern World: Tools, Methods, Projects.**" A. Shahnazaryan introduced the audience to digital tools used in the humanities, which significantly ease a scholar's technical workload by saving time and analyzing large volumes of data in seconds. The presentation covered the primary methods of applying digital tools, featuring examples of major projects implemented worldwide as well as examples from A. Shahnazaryan's own work over the past eight years.

At the conclusion of the lecture, an online discussion raised various questions from the audience, who viewed the absolutization of digital tools critically and cautioned against potential risks. Nevertheless, acquiring knowledge of innovations in this emerging field and developing the ability to use digital tools to streamline technical work with large-scale materials were recognized as crucial.

The round-table discussion held in the second half of the day—titled "**Philology in the Age of Artificial Intelligence: AI as a Tool, Performer, or Author?**" and moderated by Associate Professor A.

Semirjyan from the Faculty of Armenian Philology—served as a direct continuation of the previous discussion. Organized through interactive game-based methods, participants were divided into several groups and tasked with guessing which of the presented literary and critical texts were written by humans and which were generated by AI. At the end of the game, the potential risks of using AI were discussed, attempting to outline the fine line beyond which a tool designed to ease a scholar's work might become harmful.

The third day of the summer school concluded with a panel discussion titled "**Issues and Development Prospects of Armenian Studies**", moderated by Associate Professor N. Vardanyan, Head of the Chair of History of Armenian Literature and Literary Theory named after Acad. Hr. Tamrazyan. Participants included the Dean of the Faculty of Armenian Philology, Assoc. Prof. A. Galstyan, alongside associate professors from the same faculty: A. Arzumanyan, V. Avagyan, L. Seyranyan, and A. Semirjyan.

The discussion served as a unique synthesis of the questions raised over the preceding two days while addressing broader issues in Armenian studies that fell outside earlier discussions. Topics included core challenges in Armenian studies, establishing necessary connections between disciplines, traditional versus modern methodologies, and future development prospects. The faculty members of the Faculty of Armenian Philology agreed that the primary mission of an Armenologist is the study of Armenians and Armenian identity. To achieve this goal today, interdisciplinary approaches are essential—integrating literature, folklore, language, art, culture, ethnography, history, archaeology, and other fields to provide a more comprehensive understanding of the phenomena under study. Interdisciplinary research in these areas can best fulfill its purpose through active collaboration among specialists across these disciplines.